ԿԱՐԾԻՔ

Գոռ Վահանի Մելիքսեթյանի «Դիզայն առարկայի դասավանդման մեթոդիկան ԲՈՒՀ-ում» խորագրով, ատենախոսության վերաբերյալ՝ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման, ԺԳ.00.02 /դասավանդման և ուսուցման մեթոդիկա/ կերպարվեստ մասնագիտությամբ:

Գոռ Վահանի Մելիքսեթյանի «Դիզայն առարկայի դասավանդման մեթոդիկան ԲՈՒՀ-ում» խորագրով ատենախոսական աշխատանքն իրականացված է արդիական թեմայով և ավարտուն ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության թեմայի արդիականությունն ընդգծվում է ոչ միայն ժամանակակից գեղարվեստամշակութային տեսության խնդրի մշակման, այլև մանկավարժության բնագավառում գիտամեթոդական հետազոտությունների բացակայությամբ: Այս իմաստով այն պահանջված և ժամանակահունչ աշխատանք է և հիմնավոր հետազոտություն՝ բաղկացած ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և ծավալուն հավելվածից:

Ներածական մասում սահմանված է հետազոտության արդիականությունը, բանաձևում են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, նրա գիտական նորույթը, մեթոդները և մեթոդոլոգիան, տեսաբանական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում վերլուծված են դիզայնի առաջացման սոցիալ-մանկավարժական պայմանները և ժամանակագրությունը, դիզայնի ուսուցման մանկավարժահոգեբանական պայմանները, ինչպես նաև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժական դիզայնի ուսուցման գործընթացում:

Տեսական ուսումնասիրության արդյունքներով ստացված տվյալները թույլ են տվել հեղինակին ձևակերպել հետևություններ այն մասին, որ.-Մանկավարժական համալսարանում դիզայն առարկայի ուսուցումը պետք է դարձնել նպատակային, մշակված, մեթոդական համակարգով՝

ա/ Մանկավարժական գործընթացում ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման տեսական և գործնական ուսուցումը:

բ/ Հիմնավորել մանկավարժական պայմանների այն համակարգը, որը մանկավարժական դիզայնի ուսուցման գործընթացում ապահովում է բուհական կրթության արդյունավետությունը:

Այս գլխում հիմնավորված է նկարիչ-մանկավարժի կրթության համակարգում դիզայն առարկայի ուսուցման հոգեբանամանկավարժական գործընթացը, որի համար ներկայացված են ապագա մասնագետին անհրաժեշտ վերամշակված և ամբողջական մեթոդական համակարգը, դրա տեխնոլոգիական ապահովման նմուշօրինակը, ստեղծագործական գործունեության համար բուհական ծրագիր-առաջադրանքները:

Ատենախոսության «ԲՈՒՀ-ում մանկավարժական դիզայն առարկայի դասավանդման մեթոդների փորձարարական հիմնավորումը» երկրորդ գլխում ներկայացված է մանկավարժական դիզայնի հայեցակարգային հիմնավորումը, մանկավարժական դիզայն առարկային ներկայացվող մոդելի իրականացման գեղարվեստամանկավարժական պայմանները, ինչպես նաև՝ հարթապատկերային և ծավալատարածական ձևերի հորինվածքային լուծումները, մանկավարժական դիզայնում և մնակվարժական դիզայնի ուսուցման մշակված մեթոդական համակարգի արդյունավետության ստուգումը և արդյունքների վերլուծությունը:

Այս գլխում ևս հեղինակը, վերլուծելով դիզայնի ուսուցման գիտական հիմքերի ժամանակակից համակարգը, գտնում է, որ մանկավարժական առկա մոտեցումները գեղարվեստական նախագծումներում կատարյալ չեն, հետևաբար անհրաժեշտ է մշակել ուսուցման առանձին փուլերի և վարժությունների անհրաժեշտ մեթոդներ և պայմաններ: Ըստ հեղինակի, դասավանդման ինտերակտիվ մեթոդները և մասնագիտական առարկաների ինտեգրացիայի կիրառմամբ հնարավոր է հասնել ուսումնահիմացական նոր մակարդակի:

Գոռ Մելիքսեթյանի ատենախոսության որպես առանձնահատուկ դրական դրսևորում հարկ է նկատի ունենալ նրա կողմից լայնորեն և խորությամբ օգտագործված պատմաժամանակագրական, ուսումնամեթոդական, գեղագիտական, արվեստաբանական, մանկավարժահոգեբանական գրականությունը:

Ատենախոսական հետազոտության արդյունքում լուծված է գիտական ենթադրությունը, որոշարկված է հետազոտության գործնական նշանակությունը նրանով, որ այն որոշակի նյութ է հանդիսանում կրթական ծրագրերի մշակման գործընթացում և համալիր գիտելիքներ ապագա կերպարվեստի ուսուցիչների համար:

Անցկացված տեսաբանական և մեթոդական հետազոտության արդյունքում ատենախոսության հեղինակը մի շարք եզրահանգումներ է կատարել, որոնք

առանձնահատուկ կարևոր նշանակություն ունեն բուհական կրթության, նոր սերնդի գեղարվեստամանկավարժական մտածողության ձևավորման և զարգացման առումով: Որպես վառ օրինակ կարելի է նշել նրա ստեղծած «Մանկավարժական դիզայնի միջոցով ուսանողների մասնագիտական որակների ձևավորմանն ուղղված մանկավարժի գործունեության մոդելը՝ համապատասխան ոլորտներով՝ կրթական, հաղորդակցական, կազմակերպչական և ուսումնադաստիարակչական:

Մանկավարժական դիզայնին նման անդրադարձը ևս մեկ անգամ փաստում է հեղինակի նախասիրությունների, թեմայի արդիականության և կարևորության մասին, որ այն, յուրահատուկ գեղարվեստական ստեղծագործական բնագավառ լինելով, առավել անհրաժեշտ է ապագա կերպարվեստի ուսուցչին և դիտարկվում է, որպես մասնագիտական կարողությունների ընդլայնման ինքնուրույն բնագավառ:

Մանկավարժական առաջավոր ու իր սեփական փորձի և վերլուծահամադրական հետազոտությունների հիման վրա հեղինակին հաջողվել է առաջին անգամ ի մի բերել և համակարգել մանկավարժական հայեցակարգային մոտեցումները, մեկնաբանելով տասնյակ հեղինակներին, նրանց նախասիրությունները, եզրահանգումները:

Սույն ատենախոսության բովանդակային կուռ կառուցվածքը գեղարվեստամանկավարժական նոր մոտեցումներով հնարավորություն է ընձեռել հեղինակին առաջարկելու նոր, արդյունավետ մեթոդական համակարգ, որի իմաստային մեկնությունը, մեր կարծիքով, կարող էնպաստել ինչպես ԲՈՒՀ-ում տվյալ առարկայի դասավանդման մեթոդիկայի զարգացմանը, այնպես էլ արվեստի ուսուցման ժամանակակից կրթական խնդիրների համատեքստում հանրակրթության առաջադրած պահանջմունքների և հետաքրքրությունների բավարարմանը:

Անցկացված փորձարարության արդյունքում լուծված են առաջադրված բոլոր խնդիրները: Ավելի հստակ՝

1. Դիտարկել «Մանկավարժական դիզայն» առարկայի ուսումնասիրման հիմնախնդիրների պատմությունը:

2. Բացահայտել դիզայնի առանձնահատկությունները, որպես ապագա նկարիչ-մանկավարժի կրթության միջոց:

3. Հետազոտել մանկավարժական դիզայն առարկայի գիտատեսական հիմքերը, որպես ուսումնական առարկա:

4. Բացահայտել գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների վերաբերմունքը դիզայն առարկայի նկատմամ /մանկավարժահոգեբանական տեսանկյունից/:

5. Մշակել դիզայն առարկայի նկատմամբ ուսանողների մասնագիտական նպատակաուղղված վերաբերմունքի ձևավորման ձևատեսություններ ու միջոցներ ուսումնառության գործընթացի մեջ:

6. Բացահայտել մանկավարժական ԲՈՒՀ-ում գեղարվեստական կրթության հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները մանկավարժական դիզայն դասընթացում:

7. Մշակել և գիտափորձով ստուգել ԲՈՒՀ-ում բակալավրիատում սովորողներին դիզայն դասավանդելու՝ հեղինակի կողմից առաջադրված հայեցակարգային ձևատեսության արդյունավետությունը:

Հատկապես պետք է նշել, որ անցկացված հետազոտության և, ամենից առաջ, խորը տեսաբանական վերլուծության հիմնախնդրի մշակման արդյունքում ատենախոսին հաջողվել է հաստատել մի շարք գիտական նոր իրադրություններ, դրույթներ, որոնք սկզբունքորեն փոխում են գեղարվեստական կրթության՝ արվեստ-արհեստ ուսումնառության ձևատեսության ռազմավարությունն ու վարքագիծը:

ԲՈՒՀ-ում կերպարվեստի դասավանդման ձևատեսության մեջ առաջին անգամ մշակված այդպիսի մոտեցումներից է մանկավարժական դիզայն առարկայի Գոռ Մելիքսեթյանի հեղինակած նմուշօրինակը:

Ատենախոսության ընդհանուր արժանիքներից պետք է նշել այն հանգամանքը, որ այն ավարտուն, ամբողջական և ժամանակակից հնչեղություն ունեցող աշխատանք է, որում առկա է հեղինակի բանիմացությունը, իմաստասիրությունը, մեթոդաբանությունը, գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակությունները:

Ի մի բերելով ասվածը և դրական գնահատելով Գ.Վ. Մելիքսեթյանի ատենախոսությունը, հարկ եմ համարում նկատել որոշ բացթողումներ.

1. Հետազոտության մեջ ըստ արժանվույն արտացոլված չեն կրթության մասին նոր օրենքները՝ միջնակարգ կրթության տեսությունները:

2. Ատենախոսը քիչ է ուշադրության արժանացրել սովորողների կողմից մշակույթի իմացության չմիջնորդավորված (անմիջական) կուտակման խնդրին:

3. Ատենախոսության գլխակարգային բովանդակության ներածության մեջ բավականաչափ մեծ ուշադրություն է հատկացված դիզայնի պատմաժամանակագրությանը և տեսական նշանակությանը, իսկ որպես մանկավարժական դասակարգում բավարար չի լուսաբանված:

Իսկ ընդհանուր առմամբ Գոռ Մելիքսեթյանի «Դիզայն առարկայի դասավանդման մեթոդիկան ԲՈՒՀ-ում» խորագրով, ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի հայցման գիտական աստիճանի շնորհման ԺԳ.00.02 /դասավանդման և ուսուցման մեթոդիկա/, կերպարվեստ մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս
ՄԳԹ, դոցենտ Ա. Ա. Պողոսյան
10.05.2026

Հաստատում եմ՝
Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի տնօրեն Ա. Սարգսյան